ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 պայմանագրում 2020 թվականի հունվարի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

16 10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 գնման պայմանագրի

ք Երևան 15.01 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս ընկերության տնօրեն Հ. Լևոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 16 10 2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան

1 1 Կողմերը որոշեցին

ա) Պայմանագրի N 1 հավելվածի բոլոր տեղերում <<91>> թիվը փոխարինել <<121>> թվով

բ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2 Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2 2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2 3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Եղվարդ Սաֆարյան 3-րդ նրբ. 8 տուն
կառավարական տուն 3	<<Արդշինբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2473701004110000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 03309254
Հ/Հ 900011027597	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Հ. Լևոնյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված
16 10 2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 պայմանագրի
01 2020թ. կնքված N1 համաձայնագրի

<<Հավելված N 1 1
16 10 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցման
նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման

Հ.հ	ՆՆԳ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 121 օրացուցային օր)																	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1	Ելակետային նյութերի հավաքագրում																		
2	Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում																		
3	Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների (իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ																		
4	Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում																		
5	Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում																		
6	Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ																		

7	Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ																			
8	Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը																			
9	Նախագծի լրակազմի քաղաքաշինական փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում																			
10	Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում																			
11	Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում																			

>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027597
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Լ. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ
ք. Եղվարդ Սաֆարյան 3-րդ նրբ. 8 տուն
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2473701004110000
ՀՎՀՀ 03309254

Տնօրեն՝

_____
(ստորագրություն)